

**ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԿԻԼԻԿՅԱՆ 4 ՁԵՌԱԳՐԵՐԻ  
ԱՐԾԱԹՅԱ ԿՐԿՆԱԿԱԶՄԵՐԸ  
Մաթևոսյան Մ. Ս.**

Աշխատանքը Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող կիլիկյան ձեռագրերից չորսի կրկնակազմերի մասին է: Առաջինը՝ 7690 համարի ներքո գտնվող, ուսումնասիրության առարկա է եղել տարբեր գիտնականների համար, իսկ մյուս երեքը լուսաբանված չեն: Այս չորս ձեռագրերը ներկայացնում են կիլիկյան արծաթագործության տարբեր դպրոցներ: Աշխատանքում ոչ միայն անդրադարձ է կատարվում կրկնակազմի արտաքին տեսքի նկարագրությանը, այլև ոճային առանձնահատկություններին, տեխնիկաներին: Համեմատականներ են անցկացվում ուսումնասիրվող կրկնակազմերի վրա առկա պատկերների և մանրանկարչական պատկերագրության վաղագույն օրինակների միջև:

**Բանալի բառեր.** կիլիկյան արծաթագործություն, կրկնակազմ, ձեռագիր, մանրանկար:

**Նախաբան:** Աշխատանքի համար մատենագիտական նյութ հանդիսացել են Գարեգին Հովսեփյանի, Մերիկ Դավթյանի, Արմեն Մալխասյանի, Հայկ Տեր-Ղևոնդյանի, Վիգեն Ղազարյանի, Տատյանա Իզմաիլովայի և այլոց աշխատանքները և Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Ցուցակ Ձեռագրացի հատորները: Նշված հեղինակների աշխատանքները հնարավորություն են տվել պատկերացում կազմելու կրկնակազմերի մասին: Աշխատանքը նպատակ ունի լրացնելու կրկնակազմերի ուսումնասիրության ոլորտում առկա բացը: Աշխատանքի նպատակներից են նաև կրկնակազմերի պատկերագրական և տեխնիկական առանձնահատկությունների վերհանումը: Մատենադարանում պահվող կիլիկյան հավաքածուի կրկնակազմերը մասամբ են ուսումնասիրված, ուստի տվյալ թեմայի

շուրջ գիտական աշխատանքները արդիական են և օգտակար տարբեր շրջանակների համար:

Կիլիկյան արծաթագործությունը, կազմելով հայկական արծաթագործության մի մասնիկը, ունի ուսումնասիրության պակաս: Մեր հոդվածում անդրադարձ է կատարվում Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող կիլիկյան ձեռագրերի արծաթյա կրկնակազմերին: Թեմայի ընտրությունը պայմանավորված է այդ ոլորտում եղած բացով: Բազմաթիվ հոդվածներում անդրադարձ է կատարվել կիլիկյան արծաթագործությանը, սակայն կրկնակազմերի ոլորտը լավագույնս ուսումնասիրված չէ: Կիլիկիայում արծաթագործությունը բավականին զարգացած էր, որի մասին վկայում են մեզ հասած նմուշները: Կիլիկիայում գործում էին արծաթագործության մի քանի կենտրոններ, որոնցից յուրաքանչյուրն ուներ իրեն բնորոշ գծերը: Այդ կենտրոններից են Հռոմկլան, Սկևոան, Դրագարկը, Ակները և Սիսը: Օգտագործել են արծաթի մշակման տարբեր տեխնիկաներ՝ սևադա, դրվագում, փորագրված, զուգաթել, հատիկավոր: Նշված տեխնիկաներով էին արվում արծաթյա կազմերը [1]:

Արծաթյա կրկնակազմերը ունեն երկու նշանակություն՝

1. պաշտպանիչ,

2. գեղարվեստական:

Շատ են դեպքերը, երբ ձեռագիրը, տեղափոխվելով տեղից տեղ, ենթարկվել է կողոպուտի: Կազմը ձեռագրի գոյացման կարևոր, ավարտական փուլն է: Ձեռագրերի կազմերի համար, կաշվից բացի, օգտագործել են նաև արծաթ և ոսկի, որոնցից կրկնակազմեր են պատրաստել: Կրկնակազմերի և կազմերի տեսքը համեմատվում է տուփի հետ: Բավականին հետաքրքիր համեմատություն տեսնում ենք «Էջմիածին» ամսագրում տպագրված մի հոդվածում, որտեղ նշվում է, որ ձեռագիր մատյանների և դրանց մեջ կարված տետրերը՝ պրակներ, մամուլներ, հնում պահել են կտավե փաթեթների մեջ, ծածկել են գործվածքով կամ կաշվով՝ դնելով փայտե, մետաղե կամ փղոսկրե տուփի մեջ: Նշվում է, որ ժողովածուների հիշատակարաններում հաճախ է հանդիպում «ի մի տփի ժողովեալ» արտահայտությունը և այդ պատճառով էլ կազմին տրվել է տուփի տեսք՝ երկու փեղկ, մեջք կամ թիկունք և դռնակ [5]: Կրկնակազմերը սովորաբար ավելացվել են հետագայում: Հաճախ է լինում, երբ նվիրատվություններ են արվում թանկարժեք քարեր, որոնք ամրացվում են ձեռագրերին: Կրկնակազմերի վրա տարբեր պատկերներ են արվում (խաչի, Քրիստոսի, Հովհաննես

Մկրտչի, Մարիամի և այլն): Հաճախ կրկնակազմերին ամրացնում են մետաղյա գնդիկներ, որպեսզի սեղանի, գրակալի և այլ իրերի հետ շփման արդյունքում ձեռագիրը չվնասվի: Մեր հոդվածում անդրադառնում ենք Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 4 ձեռագրերի, որոնք գտնվում են հետևյալ համարների ներքո՝ 7690, 7691, 7770, 197:

7690 համարի ներքո գտնվող ձեռագիրը ավետարան է, որը թվագրվում է 1249 թ.-ով: Այն պատկանում է Հռոմկլայի դպրոցին: Ավետարանը ստեղծվել է Կոստանդին կաթողիկոսի պատվերով: Ավետարանի գրիչը Կիրակոսն է [4]: Այս ձեռագրի կրկնակազմը ստեղծվել է 1255 թ.-ին: Կրկնակազմի ստեղծման համար կիրառվել է դրվագման տեխնիկան: Արծաթյա կրկնակազմն ունի 2 կողմ: Մի երեսին պատկերված է Քրիստոսը՝ Մարիամ Աստվածածնի և Հովհաննես Մկրտչի հետ: Կենտրոնում պատկերված է Քրիստոսը, ում ձախ կողմում Մարիամն է, իսկ աջում՝ Հովհաննես Մկրտիչը: Դեիսուսի կամ բարեխոսության տեսարանի վաղագույն օրինակին ականատես ենք լինում Տրապիզոնի ավետարանում: Մարիամը և Հովհաննես Մկրտիչը պատկերված են խնդրարկուի դիրքով: Քրիստոսի աջ ձեռքը օրհնողի դիրքով է պատկերված: Բավականին վարպետորեն են արված կերպարների հագուստների ծալքերը: Դեմքերը նույնպես լավ են մշակված, որը խոսում է վարպետի հզորության մասին: Կերպարները առնված են շրջանակի մեջ: Շրջանակի եզրերում ամբողջ կազմով արձանագրություններ են: Կարծում ենք, որ սա ունի և՛ տեղեկատվական, և՛ գեղարվեստական բնույթ: Արձանագրությունը հետևյալն է. «ՔՍ ԱԾ ՈՂՈՐՄԵԱ ՏՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԵՒ ԾՆԱԻՂԱՅ ԻԻՐՈՑ ԵՂԲԱՐՑ ԵՒ ԵՂԲԱԻՐՈՐԴԵԱՅ ԱՄԷՆ. ԹՈՒ ԶԴ»: Հակառակ երեսին պատկերված են 4 ավետարանիչները: 4 ավետարանիչների պատկերմանը հայ մանրանկարչության մեջ առաջին անգամ հանդիպում ենք Ադրիանապոլսի ավետարանում, որը թվագրվում է 1007 թվականով [7]: Այստեղ ավետարանիչները պատկերված են երկու էջերի վրա: Յուրաքանչյուր էջում պատկերված են երկու ավետարանիչ: Չորս ավետարանիչների պատկերագրությանը հանդիպում ենք նաև 1018 թվականի ձեռագրում: Հաջորդ ձեռագիրը, որտեղ չորս ավետարանիչները պատկերված են, 1033 թվականի ավետարանն է: Այս ձեռագրերի շարքը կարելի է շարունակել, սակայն մենք ցույց տվեցինք հայ արվեստի այն վաղագույն օրինակները, որտեղ հանդիպում ենք ավետարանիչների պատկերներին: Այստեղ նույնպես

կերպարները առնված են շրջանակի մեջ: Այդ շրջանակը միաժամանակ հանդիսանում է արձանագրություն: Այստեղ վերևի հատվածում ձախից աջ գրված է հետևյալը. «ԳՐԵՑԱԻ ԱԻԵՏԱՐԱՆՍ ԵՒ ԿԱԶՄԵՑԱԻ ՀՐԱՄԱՆԱԻ ՏՆ ԿՈՍՏԱՆԴԵԱ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Ի ՅԻՇԱՍԱԿ ԻԻՐ ԵՒ ԾՆՈՂԱՅ ԻԻՐՈՅ ԵՒ ԵՂԲԱՐՑ ԱՄՄԷՆ»: Հետաքրքրական է այն փաստը, որ այստեղ ավետարանիչները պատկերված են ոչ թե ավանդական ընդունված՝ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես պատկերագրությամբ, այլ հակառակ՝ Հովհաննես, Ղուկաս, Մարկոս, Մատթեոս: Այստեղ երրորդ՝ տոնգուրավոր կերպարը Ղուկասն է, սակայն պատկերի վերևում գրված է Մարկ (Մարկոս): Սա հիմք է տալիս կարծելու, որ արձաթագործ վարպետը և նկարիչը տարբեր մարդիկ են եղել: Հավանաբար արձաթագործ վարպետը, չիմանալով ավանդական պատկերագրությունը, արձաթյա կազմը հակառակ ուղղությամբ է տեղադրել [7]: Հարկ ենք համարում նշել, որ դեռևս Մլքեի ավետարանում Ղուկաս ավետարանիչը պատկերված է տոնգուրով: Ղուկասին տոնգուրով պատկերելը բավականին տարածված էր: Հետաքրքրական է այն փաստը, որ Մարգիս Պիծակի արվեստում ոչ միայն Ղուկասն է տոնգուրով պատկերված, այլև տարբեր տեսարանների կերպարներ, ինչպես նաև մյուս ավետարանիչները [6]: Մեր հոդվածում տեղադրել ենք Մատթեոս ավետարանիչի պատկերը, որտեղ Մատթեոսը տոնգուրով է պատկերված: Ինչ վերաբերում է 1249 թվականի ձեռագրի կրկնակազմի ավետարանիչների պատկերագրությանը, ապա հագուստների ծալքերը վարպետորեն են մշակված, դեմքերը ունեն ընդհանրություններ, բավականին նման են միմյանց: Կրկնակազմի երկու կողմերն իրար են միացված ծիսիների միջոցով: Դռնակի վրա կան մետաղյա գնդիկներ, որոնք հավանաբար պաշտպանիչ նպատակով են դրվել, որպեսզի կազմը համեմատաբար քիչ վնասներ կրի:

Հաջորդ ձեռագիրը 7691 համարի ներքո է պահվում: Այն ավետարան է: Ստեղծվել է 1307թ.-ին: Ծաղկողը Օզսենտ արեղան (1451թ.) է, իսկ ստացողը՝ Վարդան քահանան [3]: Կազմի վրա խաչելության տեսարանն է պատկերված: Խաչի ներքևում Ադամի գանգն է պատկերված: Խաչված Քրիստոսի ձախ կողմում Մարիամն է, իսկ աջում՝ Հովհաննեսը: Քրիստոսի մարմնին S-աձևություն է հաղորդված: Մարմինը պլաստիկ է: Վարպետորեն են մշակված Մարիամի և Հովհաննեսի հագուստները: Վերը թվարկված կերպարների հատկանիշներին ակնատես ենք լինում Թորոս Ռոպինի 1268

թվականի Մալաթիայի Ավետարանի մանարանկարում, որտեղ նույնպես խաչելության տեսարանն է պատկերված: Այս ձեռագրի կրկնակազմի վրա նույնպես կան մանր գնդիկներ, որոնք, ինչպես նշեցինք, նախատեսված են, որպեսզի կազմը չվնասվի: Օգտագործվել է դրվագման տեխնիկան:

Մյուս ձեռագիրը պահվում է 7700 համարի ներքո: Այն պատկանում է Սսի դպրոցին: Ստեղծվել է 1237 թվականին: Գրիչը Գրիգորն է [3]: Շատ տեղեկություններ չկան: Կրկնակազմը ամրացման տեխնիկայով է արված: Ձեռագրի կրկնակազմին ամրացված է մեծադիր խաչ: Կազմի 4 անկյուններում ամրացված են քարեր: Քարերի առկայություն տեսնում ենք նաև խաչի թևերին: Կազմը ամրակներով է մյուս կողմին միանում: Այստեղ վերը նշված մետաղյա գնդիկներին ենք կրկին ականատես լինում: Այստեղ ավելի հստակ երևում է դրանց կիրառությունը: Դրանք արված են ամենուրեք: Թանկարժեք քարերը պաշտպանվում են վնասվելուց: Այս կրկնակազմը, համեմատած վերևի երկուսի, միօրինակ է և ավելի պարզունակ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այստեղ, ի տարբերություն մյուս երկուսի, բացակայում են պատկերները և դրանց փոխարեն մեծադիր խաչ է, սակայն այն նույնպես պահպանում է իր գեղարվեստական նշանակությունը:

Հաջորդը 197 համարի ավետարանն է: Պատկանում է Ակների դպրոցին և ստեղծվել է 1287թ.-ին: Գրիչը և ստացողը Հովհաննես արքաեղբայրն է: Կազմը շագանակագույն կաշի է՝ ամրացված մետաղյա զարդերով: Այստեղ ևս մեխերի միջոցով ամրացման տեխնիկան է օգտագործվել: Հետագայում ավելացված հիշատակարանում կրկնակազմի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ պահպանված չեն [2]: Այստեղ ականակուռ խաչ է ներկայացված, իսկ խաչի թևերին եզրերին փոքրիկ մետաղյա գնդիկներ են ամրացված: Հավանաբար այս ձեռագիրը մինչև Մատենադարան հասնելը կողոպտվել է կամ վնասվել, ինչի մասին վկայում է ներկայիս տեսքը:

Ուսումնասիրելով վերը թվարկված 4 ձեռագրերի կրկնակազմերը՝ հանգում ենք հետևյալ եզրկացության: Կիլիկյան արձաթագործությունն ունի իրեն բնորոշ գծերը, որոնք ժամանակի ընթացքում պահպանվել են: Կրկնակազմերի պատկերները արված են մեծ վարպետությամբ, ինչը խոսում է արվեստի այդ ճյուղի զարգացած լինելու մասին: Կերպարների դեմքերը տվյալ ժամանակահատվածի ազդեցությունն են կրում: Հագուստի ծալքերը նույնպես վարպետությամբ են արված, ինչը բնորոշ է մանրանկարչական արվեստին: Մանրանկարչական արվեստի հետ

կապի մասին է խոսում մարմնին S-աձևություն հաղորդելը: Գրեթե բոլոր ձեռագրերի կրկնակազմերում տեսանք միևնույն ընդհանրությունը՝ մետաղյա գնդիկների կիրառում: Կարելի է եզրակացնել, որ այդ շրջանում նվիրատվությունները տարածված են եղել, ինչի վառ ապացույցն է թանկարժեք քարերի առկայությունը: Մեր կատարած ուսումնասիրությունը չի սպառում ողջ նյութը, այն ավելի ընդգրկուն է, և մենք կփորձենք հետագայում կիլիկյան ձեռագրակազմերի վերաբերյալ ավելի ընդգրկուն և փաստահավաք հետազոտություն կատարել:

**Եզրակացություն:** Կրկնակազմերի ուսումնասիրությունը գալիս է ևս մեկ անգամ ցույց տալու կիլիկյան արծաթագործության զարգացած լինելը: Կրկնակազմեր պատրաստելը առանձին ճյուղ է եղել ու առանձնացել է իր դպրոցներով: Կրկնակազմերը կրում են տվյալ ժամանակաշրջանի ազդեցություն դեմքերի պատկերման տեսանկյունից: Կրկնակազմերի պատկերազրությունը ուղիղ համեմատական է մանրանկարների պատկերազրությանը: Պատկերներն ունեն ոճական առանձնահատկություններ: Կազմերը պատմագիտական և ազգագրական նյութ են պարունակում:

**СЕРЕБРЯНЫЕ ПЕРЕПЛЁТЫ ЧЕТЫРЁХ КИЛИКИЙСКИХ РУКОПИСЕЙ В  
МАТЕНАДАРАНЕ  
Матевосян М. С.**

Работа посвящена серебряным переплётам четырёх рукописей, хранящимся в Матенадаране имени святого Месропа Маштоца в Ереване. В работе мы обращаемся к четырём рукописям, из которых первая-№ 7690-была предметом изучения для многих учёных, а остальные три не изучены. Эти четыре рукописи представляют разные школы изготовления серебряных изделий. В работе не только представлены внешние описания переплётов, но и стилевые особенности, техники. Проводятся параллели между изображениями изучаемых переплётов и самыми ранними примерами миниатюрной иконографии.

**Ключевые слова:** киликийские серебряные изделия, переплёты, рукопись, миниатюра.

# SILVER COVERS OF FOUR CILICIAN MANUSCRIPTS PRESERVED IN THE MATENADARAN

Matevosyan M. S.

The work is about silver covers of four Cilician manuscripts kept in the Matenadaran named after Mesrop Mashtots in Yerevan. The first one, which is under number 7690, has been the subject of study for many scientists, but the other three have not been illustrated yet. Those four manuscripts represent different schools of Cilician silverwork. The study not only refers to the description of the cover's appearance, but also to the stylistic features and techniques. Comparisons are made between the images on the studied covers and the earlier examples of Armenian miniature illustrations.

**Keywords:** Cilician silverwork, cover, handwritten, miniature.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դավթյան Ս. Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն: 1981: 179 էջ:
2. Եզանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաբյան Փ. Յուրակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի: Հատոր Ա: Երևան: Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն: 1965: 1634 էջ:
3. Եզանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաբյան Փ. Յուրակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի: Հատոր Բ: Երևան: Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչություն: 1970: 1546 էջ:
4. Տեր-Ղևոնդյան Հ. Կիլիկյան հայկական արծաթագործության պատմությունից// «Պատմաբանասիրական հանդես»: Երևան: ՀՀ ԳԱԱ հրատարակչություն: 1963: էջ 75-84:
5. Մալխասյան Ա. Հայերեն ձեռագրերի կազմերը և նրանց պատրաստման եղանակները// «Էջմիածին» ամսագիր: 1995: № 2-3: էջ 75-80:
6. Ղազարյան Վ. Ավետարանիչների պատկերագրությունը 14-րդ դարի կիլիկյան մանրանկարչության մեջ: Զեկուցումների ժողովածու: Հայ արվեստին նվիրված միջազգային 2-րդ

սիմպոզիում: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն: Հատոր 4: 1981:  
Էջ 82-94:

7. Измайлова Т. А. Армянская миниатюра 11 века: Москва. Искусство. 1979. 237 с.

**Տեղեկություններ հեղինակի մասին**

*Մաթևոսյան Մ. Մ. – ուսանող*

*Երևանի պետական համալսարան*

*Էլ. փոստ [monte.matevosyan.95@gmail.com](mailto:monte.matevosyan.95@gmail.com)*

*Տրվել է խմբագրություն 10.10.2019*